ՀՈՎՍԵՓԻ ԿՅԱՆՔԸ. ՓՈՐՁՈՒԹՅԱՆ ԳՈՒԲԸ

ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐՆԵՐ. ԾՆՆԴՈՑ 37.12-36

12 Նրա եղբայրները գնացին Սյուքեմ՝ արածեցնելու իրենց հոր հոտերը: 13 Իսրայելն ասաց
Հովսեփին. «Ահա քո եղբայրները Սյուքեմում հոտեր են արածեցնում. արի՛ քեզ ուղարկեմ նրանց
մոտ»: Եվ նա ասաց. «Ահա ես այստեղ եմ»: Իսրայելն ասաց նրան. 14 «Գնա տես՝ քո եղբայրներն
առողջ են, և ոչխարները ողջ են, ու ինձ լուր բեր»: Եվ նրան ուղարկեց Քեբրոնի հովտից, և նա եկավ
Սյուքեմ:

- ***Բայց ինչո՞ւ Հակոբն ինքը չգնաց:***
- ***Հակոբը երբեք չի զբաղվել ընտանեկան խնդիրներով.***

Նախ, Հակոբը պատրաստվում է իր 17-ամյա որդուն ինքնուրույն ուղարկել Սյուքեմ, որը Հեբրոնից առնվազն 60, եթե ոչ 70 մղոն հեռավորության վրա է: Դա վտանգավոր ճանապարհորդություն է, քանի Սյուքեմում, Հակոբի և նրա որդիների հեղինակությունը այնքան էլ լավ չէր: Հակոբը այդ մասին խոսում է Ծննդոց 34-ում իր որդիների գործած հանցանքի մասին: Նրանք գտնվում են թշնամու տարածքում: Արդյո՞ք նրանք ապահով են: Բավական ժամանակ է, ինչ նրանց մասին լուր չունի: Իրականում, ինչ-որ չափով զարմանալի է, որ Հակոբը նույնիսկ ուղարկեց Հովսեփին, որպեսզի ստուգի իր եղբայրներին: Մենք հստակ չգիտենք, թե ինչ էր նա մտածում: Ինչո՞ւ նա այս պահին ծառաներ չուղարկեց:

15 Երբ նա թափառում էր դաշտում, մի մարդ հանդիպեց նրան և հարցրեց. «Ի՞նչ ես փնտրում»: 16 Նա
ասաց. «Իմ եղբայրներին եմ փնտրում: Ասա՛ ինձ, խնդրեմ, որտե՞ղ են նրանք արածեցնում»: 17 Այն
մարդն ասաց. «Նրանք հեռացան այստեղից, որովհետև լսեցի, որ նրանք ասում էին. “Գնանք
Դոթայիմ”»: Հովսեփը գնաց իր եղբայրների ետևից և նրանց գտավ Դոթայիմում:

Դոթան = «երկու ջրհոր» — Սամարիայից 12 մղոն հյուսիս:

18 Երբ ինքը դեռ չէր մոտեցել նրանց, եղբայրները հեռվից տեսան նրան և դավադրություն արեցին, որ
սպանեն նրան. 19 Եվ միմյանց ասացին. Ահա գալիս է այն երազ տեսնողը: 20 Եւ հիմա եկէք
սպանենք նորան, եւ գուբերի մէկի մէջ գցենք նորան. Եւ ասենք՝ Թէ մի չար գազան կերել է նորան. Եւ
տեսնենք նորա երազները ինչ կլինին:

նրանք տեսան Հովսեփին հեռվից գալիս: Իսկ որտեղի՞ց իմացան որ դա Հովսեփն է:

1. ՆՐԱՆՔ ՆԿԱՏԵՑԻՆ ՀԱԿՈԲԻ ՆՎԻՐԱԾ ԹԱՔԵՐՈՎ ՊԱՏՄՈՒՃԱՆԸ:

- *Վերարկուն ներկայացնում է Հովսեփի հեղինակության դիրքը: (Կարդացեք Ղուկաս 15 – Անառակ որդու վերադարձը:*

2. ՆՐԱՆՔ ՀԻՇԵՑԻՆ ՀՈՎՍԵՓԻ ՊԱՏՄԱԾ ԵՐԿՈՒ ԵՐԱԶՆԵՐԸ:

- *Եւ տեսնենք նորա երազները ինչ կլինին...*

21 Ռուբենը դա լսեց և նրանց ձեռքից ազատեց նրան՝ ասելով. Չսպանեք նրան: 22 Եվ Ռուբենն ասաց նրանց. Արյուն մի՛ թափեք. գցե՛ք նրան այս գուբը, որ այս անապատում է, և ձեռք մի՛ տվեք նրան. որպեսզի նրան ազատեր նրանց ձեռքից և վերադարձներ իր հորը:

- ***Մենք պետք է հիշենք, թե ինչ ասաց Հիսուսը Մատթեոս 5-ում, երբ նա խոսում է ատելության և սպանության մասին:***

Մատթեոս 5.21-22 – Լսել եք, թե ի՛նչ ասվեց նախնիներին. Մի՛ սպանիր" ...Բայց ես ասում եմ ձեզ. ամեն ոք, ով զուր տեղն իր եղբոր վրա բարկանա, դատաստանի կենթարկվի, և ով իր եղբորը "հիմար" ասի, ատյանի ենթակա կլինի, և ով իր եղբորը "անմիտ" ասի, գեհենի կրակին կդատապարտվի:

23 Երբ Հովսեփը եկավ իր եղբայրների մոտ, Հովսեփին մերկացրին իր պատմուճանից, այսինքն՝ իր վրայի թևքերով պատմուճանից, 24 և նրան առան ու գուբը գցեցին (Երեմիա 38:6): Գուբը դատարկ էր, մեջը ջուր չկար: 25 Ապա նստեցին հաց ուտելու. վեր բարձրացնելով իրենց աչքերը՝ տեսան, որ իսմայելացիների մի քարավան է գալիս Գաղաադից, և իրենց ուղտերը համեմներով, բալասանով ու զմուռսով բեռնած՝ գնում էին, որ տանեն ցած՝ Եգիպտոս:

Ծնն. 42.21 - 21 Եւ նորանք իրար ասում էին. Իրաւ մենք մեր եղբօր վրայով յանցաւոր ենք, որովհետեւ տեսանք նորա հոգու նեղութիւնը երբոր նա մեզ աղաչում էր, եւ չլսեցինք. Նորա համար գալիս է այս նեղութիւնը մեր վերայ:

Գուբի փորձությունը անխուսափելի է մեր կյանքից.

Դան. 6.23 - 23 Եւ Դանիէլը դուրս բերուեցաւ գուբիցը, եւ նորա վերայ ոչ մի վնաս չգտնուեցաւ, որովհետեւ հաւատացել էր իր Աստուծուն:

Երեմիային գուբից դուրս հանեցին և նա կրկին մարգարեացավ (Եր. 38):

26 Եվ Հուդան ասաց իր եղբայրներին. Ի՞նչ օգուտ, եթե սպանենք մեր եղբորը և թաքցնենք նրա արյունը. 27 Եկեք նրան վաճառենք իսմայելացիներին, և մեր ձեռքը թող նրան չդիպչի, որովհետև նա մեր եղբայրը՝ մեր մարմինն է: 28 Եվ նրա եղբայրները լսեցին: Երբ մադիանացի վաճառականներն անցնում էին, Հովսեփին քաշեցին, դուրս հանեցին գբից և քսան արծաթով Հովսեփին վաճառեցին իսմայելացիներին. նրանք էլ Հովսեփին տարան Եգիպտոս:

29 Եւ Ռուբենը դարձավ դեպի գուբը, և ահա Հովսեփը գբի մեջ չէր. և նա պատառոտեց իր հագուստները, 30 Եւ վերադարձավ իր եղբայրների մոտ ու ասաց. Պատանին չկա, հիմա ես ո՞ւր գնամ: 31 Եվ վերցրին Հովսեփի պատմուճանը, այծերից մի նոխազ մորթեցին և պատմուճանը թաթախեցին արյան մեջ: 32 Ապա ուղարկեցին թևքերով պատմուճանը և բերեցին իրենց հոր մոտ և ասացին. Գտել ենք սա. հիմա ճանաչի՛ր, թե սա քո որդու պատմուճա՞ն է, թե՞ ոչ: 33 Նա ճանաչեց այն և ասաց. Իմ որդու պատմուճանն է. մի գիշատիչ գազան կերել է նրան. Հովսեփն անպատճառ հոշոտվել է:

- ***Այս պատմությունը շատ նման է նրան, ինչ Հակոբն արեց իր եղբորը՝ Եսավին:***

ԾՆՆԴՈՑ 27.16 – Եվ ուլերի մորթիներն էլ հագցրեց նրա ձեռքերին ու վզի լերկ տեղին:

34 Հակոբը պատառոտեց իր հագուստները, քուրձ կապեց իր մեջքին և շատ օրեր սուգ արեց իր որդու համար: 35 Նրա բոլոր որդիներն ու բոլոր աղջիկները եկան մխիթարելու նրան, բայց նա չէր կամենում մխիթարվել: Եվ ասաց. Ես սուգով կիջնեմ գերեզման՝ իմ որդու մոտ: Եվ նրա հայրն այդպես ողբում էր նրա համար: 36 Մադիանացիները Եգիպտոսում Հովսեփին վաճառեցին փարավոնի ներքինի Պետափրեսին՝ թիկնապահների պետին:

ՀԱՐՑ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ.

Նույնը մեր կյանքում է. Որտեղ եք վիրավորվել: Ի՞նչ սպիներ եք ունեցել դրա պատճառով:

Ահա թե ինչ է ասում Հռովմայեցիս 12-ը մեզ մեր տառապանքների ժամանակ, երբ մենք վիրավորված և բռնության ենք ենթարկվում ուրիշների կողմից:

Հռոմեացիներին 12.17-20 – Որևէ մեկին չարի դիմաց չար մի՛ հատուցեք. բոլոր մարդկանց առաջ բարիք անել խորհեք: Եթե հնարավոր է, որքան ձեզանից է կախված, բոլոր մարդկանց հետ խաղաղությամբ մնացեք: Ինքներդ վրեժխնդիր մի՛ եղեք, սիրելիներ, այլ Աստծու բարկությանը տեղ տվեք, որովհետև գրված է. Իմն է վրեժխնդրությունը, ես էլ կհատուցեմ (Բ Օր. 32.35),- ասում է Տերը: Բայց՝ Եթե քո թշնամին քաղցած է, հաց տուր նրան, իսկ եթե ծարավ է, ջուր տուր նրան, որովհետև այս անելով՝ նրա գլխի վրա կրակի կայծեր կկուտակես (Առկ. 25.21-22):

ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՔԵԶ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ